ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Երևանի Լեոյի անվան թիվ 65 ավագ դպրոց» ՊՈԱԿ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դանիել Վարուժանի կենսագրության արտացոլումը նամակներում

Հեղինակ՝ Հասմիկ Նահապետյան

Գյումրու տնտեսագիտական վարժարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն.....2

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ…….....…….....….3

Գլուխ 1. Դանիել Վարուժանի կենսագրության արտացոլումը նամակներում……...….....…5

Գլուխ 2.Դանիել Վարուժանի կենսագրության արտացոլումը նամակներում /1905-1909/ ……...….....…11

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....18

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ 19

Ներածություն

Դանիել Վարուժանը /Դանիել Գրիգորի Չպուգքյարյան/ 20-րդ դարասկզբի հայ գրականության ականավոր դեմքերից է, ստեղծագործական մեծ կարողություններով օժտված հայրենասեր բանաստեղծ:

Տակավին երիտասարդ հասակում նա արժանացավ ժամանակակիցների բարձր գնահատությանը և համակրանքին:

Մեր ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է հեղինակի արծարծած թեմաներով: Նրա ստեղծագործությունները այսօր ունեն նույն հնչեղությունը, բարձրաձայնում են նույն խնդիրները, որոնք առկա էին հեղինակի ապրած ժամանակաշրջանում: Դ. Վարուժանը հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի ամենաթեժ օրերին հանդես եկավ արևմտահայության հանդեպ գործադրվող ազգային ճնշման դեմ: Նա, խորապես ապրելով իր ժողովրդի վիշտը, հեռու մնաց ազգայնամոլությունից ձևավորվեց որպես բոլոր ազգերի արժանապատվության համակիր ու նախանձախնդիր գործիչ, համամարդկային տառապանքի ու ընդվզման արտահայտիչ:

Մեր աշխատանքի ուսումնասիրության առարկան Դանիել Վարուժանի նամակներն են, որոնց օգնությամբ կարելի է բացահայտել հեղինակի մանկական, պատանեկան ու հասուն կյանքի ու ապրումների մասին հետաքրքրական նյութեր:

1963 թ. Նյու Յորքում գտնվող զավակները՝ տիկին Վերոնիկ Վարուժան - Սաֆրազյանը, Արմեն և Հայկակ Վարուժանները Հայաստանի գրականության ու արվեստի թանգարանին են նվիրում բանաստեղծի հարուստ ու արժեքավոր արխիվը, որը շուրջ 50 տարի մեծագույն խնամքով պահվել էր բանաստեղծի այրու՝ Արաքսի Վարուժան - Ադիբեկյանի մոտ և ապա անցել ժառանգներին:

Արխիվում պահպանվել են բանաստեղծի <<Սարսուռներ>>, <<Ցեղին սիրտը>>,

<<Հեթանոս երգեր>> <<Հացին երգը>> ժողովածուների, ինչպես և վաղ շրջանի քնարական բանաստեղծությունների և 1903 - 1915 թթ. ընթացքում գրված նամակների սևագրությունները, որոնք առատ նյութ են տալիս առավել համակողմանիորեն ուսումնասիրելու բանաստեղծի կյանքն ու գրական - հասարակական գործունեությունը Արխիվն ուղարկելով Հայաստան՝ Վարուժանի դուստրը գրել է . << Մեծ գոհունակություն կպատճառե ինձի, որ վերջապես հորմես մեկ մաս և ամենեն թանկագինը կգտնվի վերջնականապես հայրենական հողի վրա>>:

Մեր ուսումնասիրության խնդիրն է Վարուժանի նամակների համակողմանի ուսումնասիրությունը, որի միջոցով հասել ենք մեր ***նպատակին,*** այն է՝ ճանաչել Վարուժան բանաստեղծին ու մարդուն, հաղորդակից լինել նրա խոհերին ու ապրումներին հասկանալ, զգալ բանաստեղծի հոգին:

Որպես ***մեթոդ*** ընտրվել է զննության և քննության, համեմատական վերլուծության մեթոդները:

Գլուխ 1

Դանիել Վարուժանի կենսագրության արտացոլումը նամակներում

/1902-1905/

Դանիել Վարուժանի կենսագրությունը համակողմանիորեն արտացոլված է նրա նամակներում:

<<Ամենույն տարեցույց>> պարբերականի խմբագիր Թեոդիկը Գենտում գտնվող Վարուժանից բանաստեղծություն է խնդրում իր պարբերականում տպագրելու համար՝ խնդրելով նաև որևէ լուսանկար և ինքնակենսագրական: Ահա Թեոդիկին պատասխան նամակից իմանում ենք , որ Վարուժանը ծնվել է 1884 թ. Սեբաստիայի Բրգնիկ գյուղում:

<<Այսքանով գոհ կըլլաք, եթե ըսեմ, որ ծնած եմ 1884 թ.-ին Սեբաստիո մոտ Բրգնիկ գյուղը, ուր աճած է մանկությունս ուռենիներուն տխուր հովանիներուն տակ երազկոտ, կամ գետեզերքներուն վրա բադերուն քարեր նետելով անառակորեն:

Դեռ հազիվ ես թիթեռնիկներ որսալու հասակին մեջ՝ հայրս պանդխտած է Պոլիս, և մայրս ձմեռնային երկար երեկոները՝ թոնրատանը նստած՝երևակայությունս օրորած է ենիչերներու և գայլերու պատմություններով:

Թե հայրենի Ալիսի ջրերի մեջ ինչ խորհրդավոր պատկերներ է ստեղծել մանկական երևակայությունը, ինչ է նկատել նրա մանկական հայացքը երկնակարկառ ժայռերի ու խոտերի ստվերում, ոչ ոք չի կարող ասել, բայց որ դրանք եղել են հոգեկան վերացման երջանիկ պահեր վկայում են Գենտից Թեոդիկին գրված տողերը. <<Ահա ինչ որ

տարիներով կերազեմ - վերապրել մանկական հասակիս սրտին մեջ՝ երկնահուպ ժայռի մը վրա՝ Ալիսի եզերքը՝ ոտքովս անցնող ալիքին հետ խաղամ, վայրկյան մը, վայրկյան մը միայն, և հետո թող անդունդը զիս կըլլե, զիս՝ սրտիս հետ, այդ մեկ հատիկ գանձատուփիս հետ>>:

Հորեղբորը գրած նամակից իմանում ենք, որ պանդխտության մեջ գտնվող հայրը փոքրիկ Վարուժանի համար եղել է հեռավոր , անհաս կարոտ, նրա նկատմամբ տածած սերն ու կարոտը վերաճել են պաշտամունքի .<<Միթե կարելի էր մանավանդ ինձի չհիշել զձեզ՝ որուն շուքին տակ ժամանակ մը իմ մանկությունս անցավ , որուն աչքերին մեջ ժամանակ մը պանդուխտ հայրս պաշտեցի>>:

Թագուհին մայրական քնքշանքից ավելին չէր կարող տալ արդեն հասակ առնող, գրի նկատմամբ սեր ցուցաբերող որդուն, նա հազիվ գրաճանաչ էր և նամակներ դժվարությամբ էր գրում: Դա է վկայում Վենետիկից մորը ուղղված Վարուժանի նամակը.

<<Անուշակ մայրիկ

Ձեր ձեռագրով՝ Ձեր նամակը ինձի անակնկալ մ·եղավ, քաղցր անակնկալ մը: Ասկե վերջ պիտի գրեք, այնպես չէ, քանի որ Ձեր սրտեն ալ մեկ կտորը միայն պանդխտության մեջ է:

Մեծ ջանքով մը գրերնիդ կարդացի. թուղթը մեյ մը աջ դարձնելով, մեյ մը ձախ, և քիչ մըն ալ մարգարեանալով>>:

Վարուժանը ուշ է գրաճանաչ դարձել՝ 10 – 11 տարեկան հասակում . <<Գյուղին դպրոցը հազիվ սկսած եմ ժամգիրք կարդալ սովրիլ, զիս տարած են Պոլիս1896-ի կոտորածի օրերուն, ուր հայրս արյան սարսափին մեջ փնտրելե հուսահատ՝ գտած եմ բանտին մեջ՝ այն տխուր օրերուն ստորեն ամբաստանված>>:

<<Երկու տարի հաճախած եմ Սագըզ Աղաճիի Մխիթարյան դպրոցը, հետո Քաղկեդոնի վարժարանը, ուր երկար ատեն պատանեկությունս երազած է ընդմեջ Մուրատի ծովակին և Դուրյանի ոսկրներուն՝ Սկյութար:

Արձակուրդներս ընդհանրապես անցած են հորս քով՝ Խավյար խանը՝ հայ պանդուխտներուն հառաչանքներուն և վերքերուն ունկնդիր:

Արիստակես Քասկանդիլյանին, Դերենիկ Ճիզմեճյանին, Ստեփան Սարյանին և այլոց գրած նամակներում բազմաթիվ կենսագրական փաստեր կան Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում /1902-1905/ և ապա Բելգիայի Գենտ քաղաքի համալսարանում /1905-1909/ Վարուժանի ուսումնառության ընթացքի մասին:

Վարուժանը վարժարանն ավարտելուց հետո իր ուսուցչի հետ որոշել էր, որ պետք է ուսում շարունակի Լոզանում, սակայն Մխիթարյան միաբանությունը որոշում է,

որ նա սովորելու է Գենտում. <<Հիմա գուցե զարմանաք, եթե ըսեմ թե Կանտ կգտնվիմ՝ մինչդեռ միասին համախոհ էինք Լոզան երթալուս վրա: Մեծավորը այսպես ուզեց՝ Կանտը ավելի կաթոլիկ գտանելով….. Վարժապետներս կհամակրեն զիս գուցե հայ ըլլալուս պատճառով>>,- Ս. Երեմյանին գրում է Վարուժանը:

Ռ. Պազարճյանին գրած նամակում կարդում ենք . <<Համալսարան կհաճախիմ . գրական և իմաստասիրական ճյուղերուն>>: Սակայն հայրը դեմ է եղել որդու ընտրած մասնագրտության հարցում և շատ անգամ նամակներում արտահայտել է իր դժգոհությունը: <<Հորմես ջլատիչ նամակներ կստանամ… դառն ու միանգամայն տհաճ դժգոհություն մը ցույց կուտա որոշած ասպարեզիս հանդեպ. Այն դիրքին մեջ եմ , որ կամ հորս պիտի ծառայեմ կամ հայրենիքիս>>:

Գրականության դասընթացներին հաճախելուն զուգահեռ կանոնավոր հետևում է նաև քաղաքական ու տնտեսագիտական գիտություններին, նա աշխատում էր որքան հնարավոր է ավելին սովորել՝ հայրենիքի նկատմամբ պարտքի խոր գիտակցությամբ:Նրա կարծիքով <<ամեն ձրիավարժ շրջանավարտ որ լոկ ընտանիքին օգտակար, հայրենիքին ոչինչ կընե, գող է և իր ընտանիքը գողոնին մասնակից>> / Ա. Քասկանդիլյանին ուղղված նամակ/:

Ամբողջովին գտնվելով Մխիթարյան միաբանության հսկողության տակ՝ նա ևս մյուս աշակերտների նման կտրված է եղել արտաքին աշխարհից : Հետագայում ուսումը շարունակելով նույն Մուրադ –Ռաֆայելյան միջոցներով՝ Վարուժանը բախումների մեջ է եղել Մխիթարյան միաբանության մի մասի հետ: Վանքի ուսումնական խորհուրդը կամայականորեն ուշացրել է նրա ամսաթոշակը, հետո նաև ուսման վարձը, երբ Բելգիայի կառավարությունը որոշում է օտարերկրյա ուսանողների կրթությունը

դարձնել վճարովի. << դրամ կպահանջվի մեկե մը, որ միայն պիտի ունկնդրե և շատ - շատ քանի մը հարցումներու պիտի պատասխանե – ասոր կըսեն լույսի վաճառականություն>>: Նյութական ծանր զրկանքները Վարուժանին հասցնում են հոգեբանական ծանր վիճակի: Նա նույնիսկ մտածում է ուսումը կիսատ թողնելու մասին. << Ինձի դարձյալ երկու միջոց կմնա – կամ վարժարանը պետք է բոլոր պետքերս հոգա այն գիտակցությամբ, որ բարերարներուն դրամը ջուը նետած չըլլար և կամ պետք է ուսումս կիսակատար թողում և երթամ օրական հացս շահելու>>:

Ա. Քասկանդիլյանին գրված նամակներից մեկում կարդում ենք. << Ահա ամիս մըն է ոչ դեկտեմբերի 100 ֆրանկ տակավին ամսավճարն ուղարկված է և ոչ իսկ համալսարանին 250 ֆրանկ տարեկան վճարումը: Բայց ինչ որ ներկայիս զիս տարտամ և այս անծանոթ երկրի մեջ գրեթե վտանգավոր վիճակի կենթարկե, ամսավճարիս հապաղումն է. 50 ֆրանկի պարտք ըրած եմ և 50 ֆրանկի ապառիկ>>:

Մխիթարյան միաբաններին գրված նամակներում շատ հաճախ ենք հանդիպում ամսական ծախսերի հաշվետվությունների, որոնք խնամքով ներկայացնում էր Վարուժանը:

Նյութական ծանր կացությունը, օտար քաղաքի մեջ միայնությունը, մերժված սերը Վարուժանին զցում են <<ահաբեկիչ առանձնության մը մեջ, ուր լեզվիդ հասկցող չկա, ու մնաց թե հոգիեդ , - Դերենիկ Ճիզմեճյանին ուղղված նամակում գրում է Վարուժանը, - չկա մտերիմ մը, գորովալից սիրտ մը, մեկը, որ քեզ մխիթարե, և քեզմե մխիթարվի կամ հասկնա գրական խառնվածքդ ու ազդակ մըլլա բերումիդ>> : Նույն նամակում կարդում ենք, որ մարդիկ խենթի տեղ դրած են զինքը և խուսափում են իրենից. <<տխրություն, մտատանջություն, ձանձրույթ և հուսահատություն, ահա բաժինը երիտասարդ հասակիս>>:

Հուսահատության, լքման պահերին նույնիսկ Վարուժանի մտքով անցնում է ինքնասպանություն գործել. <<Վիճակս է ցիրուցան, միշտ գերգրգռված ժամեր կունենամ, որ ես իմ թշնամիս կդառնամ, ես ինձմե գրեթե կսոսկամ, եթե այսպես շարունակվի, ես ինձի հետ գեշ բան պիտի լմնցուցեմ>>:

Դ. Ճիզմեճյանին ուղղված մեկ այլ նամակում էլ կարդում ենք. << Մինակ եմ, մինակ եմ,

մինակ, կհասկնաս, արցունքներուս հետ մինակ, երազներուս հետ մինակ, ամբողջ երկու տարի է , որ անձնասպանության գաղափարին հետ կապրիմ….. կարող չեմ կրելու իմ այս սեփական կյանքս իսկ>>:

Վարուժանի բախումները Մխիթարյան միաբանության հետ միայն նյութական հիմք չեն ունեցել, այլև՝ բարոյական:

Չափազանց բնորոշ են այն նամակները, որոնք վերաբերում են Վարուժանի 1-ին գրքի՝ <<Սարսուռների >> տպագրության շրջանին / 1906 /: Այն տպվել է վանքի տպարանում: Մխիթարյան խմբագիրները Վարուժանի ներկայացրած ստվար ձեռագրից ընտրությամբ վերցրել են 17-ը: Դրանք նախապես տպվել են <<Գեղունի>> հանդեսում, ապա արտատպվել առանձին գրքով, 500 օրինակ տպաքանակով, որից 200-ը վանքը ցանկացել է պահել իբրև թղթի և ծախուց վարձ: Նույնիսկ միաբաններից շատերը սա համարեցին <<ցուրտ վաճառականություն>>:

Ստ. Սարյանին գրած նամակում կարդում ենք. <<Մեծ ցավով կըսեմ, որ վանքը քերթվածներուս հրատարակությունն այլանդակեց, վերջերս տպարանապետեն նամակ մը ստացա, նամակ այնքան ջլատիչ, որ կարող էր ամեն բանաստեղծություն բանազեղծության փոխել… Այս մասին խիստ սիրտս այրած էև եթե զայրանալու կետ մը կա այն է, թե կհամարձակվին ըսել, թե շնորհ մըն է ըրածնին… Եթե մեկ ուրիշ մեծ ցավ մըն ալ ունիմ, այն է որ Մուրադ ռափայելյան վարժարանին այդպես փոքր և դժգույն հատոր մը նվիրվեցավ>>:

Բայց Վարուժանին զայրացրել և վիրավորել է ոչ այնքան հարցի նյութական կողմը, որքան այն իրողությունը, որ <<Սարսուռները>> հրատարակվել է մեծ կրճատումներով՝ մերժելով նրա սիրույին բանաստեղծությունները՝ <<Պսակման խորհուրդեն վերջը>>, <<Սիրերգ>>, <<Վերադարձ սիրո թաղումեն>>, <<Խաբուսիկ սեր>> և այլ գործեր, որոնցով հեղինակը փորձում էր դուրս գալ վենետիկյան անձուկ շրջանակներից: Թեոդիկին, Վ. Թեքեյանին գրած նամակներում կարդում ենք. <<Վանքը չուզեց անոնք հրատարակել՝ անոնց շեշտերը գայթակղեցուցիչ գտնելով իր հնադարյան կուսության և պահպանողության>>:

Այս շրջանում Վարուժանը վերջնականապես ընդվզել է Մխիթարյանների

պահպանողության դեմ և խոր հիասթափությամբ գրել. <<Քահանաներուն խոսքը կրոնքին ռեքլամն է, իրենց խոսքը քաղցր է իրենց աղոթքին պես, բայց իրենց սիրտը սև է իրենց գդակին պես>>:

Թեոդիկին ուղղված նամակում գրում է, որ <<վանքը փչացած է, քանի մը քահանաներ կան միայն, որ իսկապե հարգվելու արժանի են, մյուսներուն ոտքին տեղը մոդես կսողա… Վանքը գերեզմանատուներ կան միայն, որոնք սոսկ նվիրական են: Խեղճ ոսկորներ Ալիշանիս, որքան պիտի ուզեի ազատել զՁեզ և ծոցիս մեջ միայն թաղել>>:

Չնայած առանձին վեճերին ու հուզումներին Վարուժանը երախտագիտական զգացումներ ու սիրելի հիշատակներ տարավ վարժարանից: Աթանաս Տիրոյանին հղված նամակում նա խոստովանում է. <<Իմ սերս Մուրադ Ռափայելյանի հանդեպ իր խորունկ արմատը ունի >> կամ <<Վարժարանը, որ ընտանիքիս հավասար սիրած եմ, և այս անկեղծորեն կըսեմ, զայն կհամարեմ ամբողջ հայրենիքիսհավասարած մեկ նժդեհ մասը, ու ազգի մը ապագան կը կռանվի, ուր որբերը հայր կը գտնեն, ազքատները հացն ամենը միասին լույսը>>:

Թեև <<Սարսուռները>> կիսով չափ հասավ ընթերցողին, սակայն լայն ընդունելություն գտավ:

<<Բրգնիք գեղը մեզ լավ բանաստեղծ տվավ>>,- գրում է Արփիարյանը:

<<Ձեր հատորիկն ստացա և զմայլանքով կարդացի>>,-Վարուժանի պատասխան նամակում հայտնում է Չոպանյանը, իսկ <<Սարսուռներին>> նվիրված ազդի մեջ գրում է. <<Վարուժան հայ բանաստեղծության ամենեն ինքնատիպ և հզոր դեմքերեն մինը լլալու կոչված է>>:

Գլուխ 2

Դանիել Վարուժանի կենսագրության արտացոլումը նամակներում

/1905-1909/

Գենտում եղած ժամանակ Վարուժանը մտածում էր հրատարակել իր հեգու հույզերը թարգմանող մի նոր հատոր /<<Սարսուռներից>> դուրս մնացած բանաստեղծություններըև դրանց ավելացնել նորերը/, բայց նոր հղացումները ստիպեցին հրաժարվել այդ ծրագրից:

<<Ամենեն խոր անձնական տառապանքները ես կրեցի Կանտի մեջ, սակայն 1904-1907-ի շրջանն էր, երբ հայությունը կխեղդվեր սուրի և սովի մղձավանջին մեջ, ու ես չուզեցի տեղ տալ իմ անհատական ցավերուս, գրեթե լռեցուցի իմ սիրտս և նախընտրեցի երգել ցեղին սիրտը … հայությունը կուլար ու կմռնչեր մեջս>>:

Հայրենիքի վիճակը դառնում է տագնապալի և օրհասական, սպասվում են նոր կոտորածներ, հայրենիքից եկած նամակները Վարուժանի հոգին լցնում են տագնապով, որի մասին նա հաղորդում է ընկերոջը. <<Հորմես նամակ կառնեմ, կը վախեմ որ Պոլիս դարձյալ արյան քաոս պիտի դառնա>>:

1906 թվականից սկսած նա զեկուցումներ է կարդում Հայաստանի և հայ ժողովրդի մաին. <<Վերջերս սկսա ճառախոսություններ ընել մեր Ազգին վրա հոս քանի մը ընկերություններու մեջ: Հուսամ, թե օգտակար պիտի ըլլամ հայրենիքիս>>,- Ռ. Պազարճյանին ուղղված նամակում գրում է Վարուժանը:

Հայրենիքից հեռու գտնվող միայնակ հոգին հաճախ է տառապել հայրենիքի կարոտից, կարոտախտը նրա հոգում էլ է բույն դրել և ծնել սեփական հողին վերադառնալու, նախնիների ոտնահետքերը փնտրելու մտքեր:<<Անպատճառ ամբողջ Հայաստանը պետք է տեսնել: Կուզեմ համբուրել այն բոլոր տեղերը ու նահատակ մը ինկավ, կամ հերոս մը կոխեց: Մենք այնքան մեծ ենք, որքան որ հողեն կխմենք մեր զգացումները: Ամեն ինչ հող է, դեպի մեր պապերուն>>:

Կարոտախտը… <<Ցեղին սիրտը >> ժողովածուի հղացման գործոններից մեկը: Վարուճանի համար ծանր էր հատկապես այն պարագան, որ Գենտում հայեր գրեթե չկային.նրան տանջում էր հայերեն խոսելու փափագը. <<Որչափ պիտի փափագեի հայ

գրագետի մը հետ մեր հայրենիքին լեզվով խոսիլ>>: Նա այդ կարոտը մեղմում էր նամակագրությամբ. Գրում էր ընկերներին, խմբագիրներին, գրողներին: Կապ էր պահպանում տարբեր պարբերականների խմբագիրների հետ՝<<Անահիտ>>, <<Բազմավեպ>>, <<Ամենույն տարեցույց>>, <<Գեղարվեստ>>, <<Ազդակ>>, <<Հայրենիք>>, որոնց էջերում էլ հրատարակվում էին նրա բանաստեղծությունները:

Գենտի համլսարանի ուսանող Դանիել Չպուգքարյան – Վարուժանը մինչև 1908 թվականն արդեն Թուրքիայի սահմաններից դուրս ճանաչված բանաստեղծ էր, իսկ 1908թ.-ի Սահմանադրությունից հետո՝ նաև Արևմտահայաստանում ու Պոլսում: Սահմանադրությունը <<մեզի բերավ երկու նոր ու քաղցր անուններ – Վարուժանինն ու Սիամանթոյինը: Ոչ ոք մեզմե անոնց անունը գիտեր>>,- հաստատումէ Հ. Սիրունին:

Գենտում Վարուժանը մնաց մինչև 1909թ.-ի հուլիսի 26-ը: Նրա անունն արդեն տարածվել էր Պոլսում ու գավառներում <<շողալով մեկեն սրտերու խոսելով>>: Թեոդիկը Վարուժանին նամակով հավաստում էր, թե <<ինչ հիացում ու պաշտություն են տածում>> նրա նկատմամբ: Թեոդիկը իր նամակում պատմում է նաև Շիշլիի գերեզմանատանը Փափազյանի արտասանության մասին/արտասանել էր <<Ջարդը>>/:

<<Սարսուռները>> ընթերցողին հասավ 1906-ին, իսկ Վարուժանի համար ստեղծագործական առումով դա արդեն անցած շրջան էր: Դեռ 1905թ.-ից նա մտել էր ստեղծագործական մի նոր հուն, դա հայրենիքի հունն էր. <<Վերջերս սկսած եմ ամբողջովին հայաստանի վրա հատոր մը պատրաստել>>,- 1906թ- մարտի 6-ին գրում է Վ. Թեքեյանին: Նա հանրությանը ներկայացավ <<Ջարդը>> պոեմով,որը 1907-ին լույս ընծայեց Ա>Չոպանյանը նախ <<Անահիտ>> հանդեսում, ապա 1908-ին առանձին գրքով: խորը ապրումով, հուզումով է ստեղծվել այս գործը. <<Արցունքիս, ցասումիս և հեգնությանս մեկ խմորումն է… ամեն շեշտ սրտիս բաբախման հետ չափած եմ>>,- գրում է Վարուժանը:

1908-ի մայիսի 25-ին Վարուժանը Չոպանյանին հայտնում է, որ ուզում է քննությունները հալիսին հանձնել, որպեսզի 2 ամիս ժամանակ ունենա <<բանաստեղծությունները կարգի բերելու և ձմռան սկիզբ հրատարակելու ամբողջովին>>: <<եթե մեկենաս մը գտնեմ, կուզեմ որ շքեղ հատորով մը վերջ դնել հայրենասիրական քերթվածներուս>>:

Սկսվում են մեկենաս գտնելու փնտրտուքները, Վարուժանը դիմում է իր սիրելի ուսուցչին՝ Ա. Քասկանդիլյանին, խնդրում Պոլսի հարուստներից մեկենաս գտնել:Վարուժանին սաստիկ հուզել է իր այս վիճակը.<< Մեկենաս մը գտնել կուզեմ: Հիմա կհասկնամ, թե որքան անիծված են գրագետները, մոր մը աղագալար երկունքով կծնանին իրենց երկը, իրենց զավակը, բայց տունը զգեստ չունին , որ զայն պճնեն արևի լույսին, դեպի դաշտերը հանեն այդ դաշտերու որդին>>:

Չոպանյանը Պոլսից խորհուրդ է տալիս հապաղել <<հայրենասիրական քերթվածներու>> հատորի հրատարակությունը, որովհետև <<անոնք շատ հակաթուրք են>> և և պետք է շատ զգույշ լինել, որովհետև թուրքական թերթերը հետևում են հայկական մամուլին , դրանք կարող են այլ կերպ մեկնաբանել: 1908-ին Վարուժանը արդեն վերջ էր դրել հայրենասիրական բանաստեղծություններին, հղացել էր բանաստեղծության ուրիշ շարք, սակայն 1909-ի կոտորածները Կիլիկիայում շիկացնում են նրա գրիչը, և նա ստեղծում է մի քանի կրակոտ քերթվածներ ևս:

Ի վերջո 1910-ին լույս է տեսնում <<Ցեղին սիրտը >> ժողովածուն:

Գենտում Վարուժանը մնաց մինչև 1909-ի հուլիսի 26-ը: Հուլիսի 25-ին Չոպանյանին գրում է ուսանողական կյանքս վերջացավ, առի դիպլոմս: Կթողում ասպնջական ֆլանտրան վաղը, կանցնիմ Վենետիկ, հետո Պոլիս և հետո Բրգննիք՝ Սեբաստիայու սև հողերուն վրա թողնելու դրոշմը պանդխտական ոտքերուս>>:

Իրականացել էր տարիների երազանքը՝ հանդիպել հարազատներին և <<հանգիստ ապրել Բրգնիքին մեջ>>: Հայրը՝ Գրիգոր Չպուգքայարյանը, << տարիներ կին և որդի մինակ թողնելե վերջ՝ պանդխտության մեջ, խաներու անկյունը, անբարոյական և քարսիրտ տերերուն լուծին տակ մաշելե վերջ>>, << հազիվ-հազ տասնոցը տասնոցին վրա դնելով >> 1908-ին վերադարձել էր ընտանեկան օջախ խնայած միջոցներով հին տան վրա նոր հարկ կառուցել:

Վարուժանը ջերմ ընդունելության է արժանանում Սեբաստիայում : Ոսումնական տարվա սկզբին նա ուսուցչության է հրավիրվում Սեբաստիայի Արամյան ազգային վարժարան , ուր անմիջապես արժանանում է աշխատակիցների և աշակերտների համակրանքին:

1911-ին Վարուժանը տեղափոխվում է Թոքատ և աշխատանքի անցնում Ազգային ճեմարանում՝ դասավանդելով հայ գրականություն, տնտեսագիտություն, բարոյագիտություն և ֆրանսերեն:

3 տարի Վարուժանը մնաց գավառում . <<Գավառին 3 տարվա կյանքս ջղայնացնող պայքարում մը եղավ ընդդեմ նախապաշարումներու, ժողովրդական տգիտության և կուսակցական խոլություններու>>: Բայց մա ապրեց, մնաց գավառում, որովհետև անհրաժեշտ էր <<գոտեմարտիլ ետ մնացած երկրի մը տձև խավարին հետ>>, որովհետև ժողովուրդը <<հոգևին ծարավ է >> և <<լույսին կուժը անհրաժեշտ է մոտեցնել իր շրթունքներուն>>:

Վարուժանի շնորհիվ Սեբաստիայի և Թոքատի հասարակական կյանքը աշխուժություն ապրեց: Նա իր ելույթներով միջամտում էր գավառի հասարարական կյանքի ընթացքին: Նամակներից մեկում գրում է <<Ավելի ժողովրդին հետ կկենակցիմ, քան Մուսային և ավելի հռետորություն կընեմ, քան թե տաղերգություն>>:

Գավառը սիրեց Վարուժանին, սիրեց նրան ժողովուրդը, ոգևորվեց նրա խոսքով. <<Վարուժան, պարծանքն էր ան քաղաքիս: Քաղաքն ամբողջ պաշտամունք ուներ իր հանդեպ>>:

Իսկ գավառը… Գավառը նրան տվեց նոր ներշնչումներ, կյանքի նոր ճամաչողություն, կյանքի ընկեր ու երկու զավակ:

Սեպտեմբերի 10-ին գրած նամակում ընկերոջը՝ Նշան Տեր-Ստեփանյանին ,Վարուժանը հայտնում է. <<Շաբաթ մ·առաջ ամուսնացա, և արդ մեղրալույսիս մեջ է, որ քեզ կը գրեմ: Օրիորդը, որ արդ ուրախ եմ ըսելու որ կինս է , գավառացիի համեստության հետ ունի եվրոպական նուրբ գեղեցկություն և գրական զարգացում: Կարող է գոհացնել բանաստեղծի երազս: Ամուսնությունս եղավ հանկարծակի, սիրային ողբերգությունե մը վերջ, որ գրեթե տարի մը տևեց: Կատարյալ վեպ մըն է զոր ապրեցա Սվազի մեջ>>:

Նույն տեղեկությունները հաղորդում է նաև Թեոդիկին, ավելացնելով. <<Վերջապես հաղթանակը տարավ մաքուր և անկաշկանդ սերը, և հարբած Սվազը տեսակ մը հետաքրքրությամբ հանդիսատես ըլլալե վերջ՝ գիտցավ գոնե ծափահարելայդ ընտրությունս և իմ ու ներա կամքի հաղթանակը>>:

Արաքսի Թաշճյանը Վարուժանի աշակերտուհիներից մեկն էր, որ մեծահարուտ ընտանիքի զավակ էր : Նա գրական փորձեր էր անում և թախանձում է ծնողներին ուղարկել իրեն Վարուժանի մոտ՝ մասնավոր դասեր առնելու : Ահա այդ ընթացքում էլ ծնվում է նրանց բուռն սերը: Սակայն աղջկա ծնողները դեմ էին, արգելում են աղջկան հաճախել դասերի, և նույնիսկ փորձում են համոզել Արաքսիին ամուսնանալ ուրիշի հետ: Ծնողների ճնշման տակ Արաքսին երկտող է գրում Վարուժանին. <<Հրաժարվեցեք ինձմե, ես ինձի համար մեկը գտած եմ և այն կը սիրեմ>>:

Վարուժանը հասկանում է, որ դա պարտադրանք է, և գրում է.<< Խորհելով, որ դուն ճնշման տակ հրաժարվել ես ինձմե , ես միշտ կըսեմ, թե քեզ ընդմիշտ կըսիրեմ…>>:

Վարուժանի նամակը ստիպում է Արաքսիին խոստովանել. <<Այո կը սիրեմ ու պիտի սիրեմ ինչ որ ալ ըլլամ, կամ սիրելովս պիտի ապրիմ, իսկ եթե չի հաջողիմ ապրիլ սիրուս համար պիտի զոհվիմ>>:

Այս նամակներից Վարուժանը թև է առնում <<Իմ հզոր և քաղցր արաքսի, այսօր նամակդ ստացա: Եվ համոզվեցա, որ դուն չես փոխվածն այդպես հեղհեղուկ մտքի տեր մեկը չես:Վերջապես նամակդ եկավ վերջ դնել թե զրպարտություններուն և թե այն վերքին, որ սրտիս մեջ ժամե ժամ կը լայննար>>:

Վարուժանը և Արաքսին գաղտնի նամակներ են ուղարկում իրար, ծրագրում միասին փախչել: Արաքսիի ծնողները ինչ-որ ձևով տեղեկանում են այդ մասին և վախենալով բամբասանքներից ու ասեկոսեներից,համաձայնում են նրանց ամուսնությանը:

Բանաստեղծը երջանիկ էր ընտանիքում. Ծնվեցին Վերոնիկ-Վարուժնակ աղջիկը, որդին՝ Արմենը: Խանդաղատանքով լեցուն հայր էր: Ահա մի նամակ՝ ուղարկված բելգիացի ընկերոջը. << Սիրելի՛ Պիեռ, արդեն երկու տարի է, ինչ ամուսնացել եմ: Կինս կոչվում է Արաքսյա, մի գեղանի խարտիշուհի, որին սիրում եմ ռոմանտիկ սիրով: Ավելին, ես ունեմ մեկ տարեկան մի աղջնակ, որն օժտված է վաղահաս իմաստությամբ: Նա արդեն գիտե <<պապա>> ասել, և այդ բառն ինձ լցնում է անպատում հրճվանքով >>:

Ընտանիքից դուրս նա ուներ երկրորդ ընտանիքը՝ դպրոցը, ուր նրան լսում էին լույսի ծարավ պատանիները: Կար նաև հասարակական լսարան, և վերջապես կար նաև նրա մեջ ապրող բանաստեղծական ներշնչանքը:

Գավառում ապրած 3 տարիները նոր հույզեր ու զգացմունքներ են հաղորդում նրան, հարստացնում նրա գիտելիքները երկրի ու ժողովրդի մասին:

Գավառում ապրած տարիներին Վարուժան-բանաստեղծը շարունակեց Գենտում հղացած իր ծրագրի իրականացումը. ամբողջացրեց և ավարտեց <<Հեթանոս երգեր>> ու <<Գողգոթայի ծաղիկներ>> շարքերը:

Գյուղաշխարհից ստացած տպավորություններն էին, որ պիտի ներշնչեին բանաստեղծին <<Հացին երգը>> շարքը:

Վարուժանի նկատմամբ գավառում ստեղծված հիացում - պաշտամունքը մնաց նաև հետագա տարիներին, փոխանցվեց նաև սերունդներին՝ հուշագրության միջոցով; Աշակերտների մեջ վառ մնաց նրա կերպարը՝ խոսքով ու գործով, արտաքին դիմագծերով:

1912թ.-ին Վարուժանն արդեն ընտանիքի հետ Պոլսում էր: Պոլիսը ձգում էր նրան երկու պատճառով, նախ՝ նյութական վիճակի բարելավման: Դա խոստովանել է նաև ինքը. <<Սակայն ստիպված նյութական դժվարություններե, զոր բազմանդամ ընտանիք մը կը պարտավորե վրաս… Պոլիս անցած եմ>>: Նրան Պոլիս էր ձգում նաև գրական կյանքին ավելի մոտիկ լինելու ցանկությունը: Վարուժանը ուզում էր նախաձեռնել, կազմակերպել, ստեղծել իր մամուլը, մոտիկից հետևել գրքի տպագրությանը: Նա նաև աշխտանքի հրավեր էր ստացել: Պոլսի կաթոլիկ համայնքի քաղաքական և վարչական գործերը ղեկավարող վարչական ժողովը և Մուրադ-Ռափայելյան սանուց միությունը նրան հրավիրել էին ստանձնելու Լուսավորչյան վարժարանի տնօրենի պաշտոնը:

Վարժարանի տնօրինությունը Վարուժանը ստանձնեց 70 աշակերտով: Չանցած մի քնի ամիս՝ աշակերտների թիվը հասավ 120-ի: Վարուժանը սկսում է վարժարանի աշխարհականացումը, փորձում վերականգնել հայրենասիրական ավանդները: Նրա դեմ է դուրս գալիս կղերը՝կաթոլիկ համայնքի պատրիարք Թերզյանի գլխավորությամբ: 1913-ի սկզբին երբ լույս տեսավ <<Հեթանոս երգերը>> , իսկ 1914-ին <<Նավասարդ>>, բարձր գնահատանքի արժանացավ գրական շրջաններում, մինչդեռ <<Կաթողիկե արձագանքը>> այն համարեց <<աղետալի գիրք մը>>: Սակայն <<հողդարի>> խմբագրությանն ուղղված իր բաց նամակում Վարուժնը գրում է <<շուները կը հաչեն,

բայց քարավանը կանցնի>>:

Մոտ երեք տարի Վարուժանը ապրեց Պոլսում՝ դառնալով պոլսահայ գրական – հասարակական շարժման ամենաճանաչված դեմքերից մեկը:

Մի շարք նամակներում Վարուժանը բացատրել է իր դավանանքը գրականության, արվեստի, արվեստագետի կոչումի մասին իր մտածումներըՄեծ հետաքրքրություն է ներկայացնում նրա բաց նամակը՝ գրված 1914-ին , ուղղված անանուն սկսնակ բանաստեղծին: Հ. Սիրունին այդ մասին գրում է թե, դա մեկ անհատի չէր ուղղված, այլ սա մի պամֆլետ էր , որն ուղղված էր բոլոր անտաղանդ սկսնակներին: նա գրում է << Դիմակավոր մարդու երեսը չի լուսավորվիր արևեն: Ձեր տողերը ձեր սրտեն պետք էին ելլելձեր երակներեն պետք էին բխիլ:Արվեստի գործ մը հեղինակի սրտեն փրթած փերթ մըն է , թարմ , արյունով և կյանքով բաբախուն>>:

Վարուժանը հրատարակության էր պատրաստում <<Հացին երգը>>, մտահղացել էր ստեղծել <<Հայ հոմերագիրքը>>, դրամայի վերածել <<Հարճը>> և դեռ ինչքան պիտրներ, որոնք մենք չգիտենք:

Բայց տեղի ունեցավ սպասված անսպասելին: 1915 –ի ապրիլի 24-ից տեղի ունեցան մասսայական ձերբակալություններ: Ձերբակալվում էր հայ մտավորական սերուցքը: Նրանց մեջ էր նաև Վարուժանը:Ձերբակալվածները կենտրոնացվեցին Այաշի և Չանղըրիի բանտերում:վարուժանին տանում են Չանղըրի: սկզբում նրանց պահում են զորանոցներում, հետո նրանց թույլատրվեց ապրել քաղաքում; <<չանղըրի մեջ վարձակալը եղած է հայ ընտանիք, ուր կա եղեր Մանուշակ անուն փոքր աղջնակ մը>>,- հետո պատմում է Արաքսին: <<Աքսորի շրջանին Վարուժանեն ստացած եմ բացիկներ: Ուզած էր Հոմերոսի <<Իլիականը>>, որ ղրկած էի իրեն: Գիտեմ, որ հոն իսկ կաշխատեր ու կգրեր>>: Այն ինչ բանաստեղծը պատկերել էր <<Ցեղին սրտում >>, զգում է իր մարմնի վրա; Դա 1915–ի օգոստոսի 26-ն էր :

Ճակատագրի բերումով նույն օրը Պոլսում լույս աշխարհ է գալիս նրա կրտսեր որդին՝ Հայկակը:

Եզրակացություն

1915 թվականը Վարուժանի ֆիզիկական մահվան թվականն է: Մեծ բանաստեղծի կյանքը շարունակվում է նաև հետմահու:

Վերապրեց նահատակվող ժողովրդի ոգին, և ոգին նրա բանաստեղծի: Ապրեց ժողովուրդը և հնչեցրեց իր բանաստեղծի երգը:

Վարուժանի պոեզիան դարձավ ոգևորության և ներշնչման աղբյուր: Նա ունեցավ բանաստեղծական իր դպրոցը:

Հայ մեծ բանաստեղծը գտավ ժողովրդի սրտի ճանապարհը և ապրում է իր երկրորդ կյանքը: Դա բանաստեղծի հարությունն է:

Բանաստեղծները չեն մեռնում, նրանք ապրում են ժողովրդի մեջ:

Ամեն բանաստեղծ մի նպատակ-բաղձանք է ունենում: 1908-ին նա հայտնեց իր բաղձանքը. << Իսկ բաղձանքս է ապագայի մարդոց նվիրել այնպիսի հզոր երգ մը, որ հայրենիքը ինձի պես արարած մը ծնած ըլլալու գոնե չզղջա>>: Վարուժանը այդպիսի շատ երգեր տվեց <<ապագայի մարդերուն>>նհայրենիքը պարծենում է իր զավակով, որ հայրենիքի տառապանքի ու երազի երգիչը եղավ:

Գրականության ցանկ

1. Դանիել Վարուժան <<Նամականի>> Երևան-1965
2. Վազգեն Գաբրիելյան <<Դանիել Վարուժան>> Երևան-1978
3. Հայկազ Հակոբջանյան <<Առկայծ ճրագ>> Գյումրի-2004